ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
АЙГЕКСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

«08» 07 2011թ. N 105

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1]-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավարի կողմից հունիս ամսվա ընթացքում ընդունած որոշումները: Արձակած կարգադրություններ չկան:

Առդիր՝ 4 թերթ:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 6767-11
«11» 07 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

02 հունիսի 2011թ. թիվ 11Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 3Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի ապրիլի 6-ի թիվ 01/12/1045-11 գրությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի մայիսի 30-ի N2 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ3Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները:
   1) Որոշմամբ հաստատված հավելված N3-ի «Իրավունքներն ու պարտականությունները» բաժնում լրացնել նոր կետեր՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2011 թվականի հունիսի 2
գ. Այգեկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեկի գյուղական
համայնքի ղեկավարի
2014 թվականի հունիսի «02»-ի թիվ 11Ա որոշման

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 3Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ

Համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-1) պաշտոնի անձնագրի «Իրավունքներն ու պարտականությունները» բաժնում կատարել լրացումներ՝

1. Սահմանված կարգով արձանագրում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստերը, կազմում համապատասխան եզրակացություններ և ներկայացնում համայնքի ղեկավարին:
2. Սահմանված կարգով կատարում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի խնամակալության և հոգաբարձության աշխատանքներին առնչվող փաստաթղթաշրջանառությունը, գրանցամատյանի վարումը և դրա պահպանումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2011թ. թիվ 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՅԳԵԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի հունվարի 31-ի N 9 որոշումը և գնումների համակարգող Մայիս Աբրահամյանի 2011 թվականի մայիսի 31-ի զեկուցագիրը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի «Այգեկի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում կազմակերպվող միջոցառմանը տրամադրել 70,2 հազար ՀՀ դրամ գումար:
2. Համայնքի 2011 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում՝ այլ մշակութային կազմակերպություններ 08.2.4 բաժնի 4239 հոդվածի ամբողջ գումարը՝ 600,0 հազար դրամը տեղափոխել 2-րդ եռամսյակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2011 թվականի հունիսի 13
գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

15 հունիսի 2011թվական թիվ 13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
«ԱՅԳԵԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 17-րդ կետերով, հիմք ընդունելով Այգեկ համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 17-ի թիվ-10 նիստի 2-րդ որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Այգեկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին տալ 1-ին փողոց 1/ա հասցեն::
2. Սույն որոշումից բխող իրավազորությունների պետական գրանցման համար դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանմանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2011 թվականի հունիսի 15
գ. Այգեկ